# ԵՎՄԵՆԻԴՆԵՐ

Թարգմանությունը՝
ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆԻ

[illegible]

[illegible] — գուշակուհի

[illegible]ԱՅՐԱՑԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

[illegible] — Էրինիաների երգչախումբը

[illegible]

## ՊՐՈԼՈԳՈՍ

**(Ապոլլոնի տաճարը Դելփիքում: Գալիս է Պիթիան):**

ՊԻԹԻԱ.— Աստվածներից նախ առաջին գուշակուհի
Գեային եմ աղոթք ուղղում, ապա նրա
Զարմ Թեմիսին, որ հաջորդեց մորը գահին
Գուշակության. այդպես զրույցն է ուսուցում:
Նրա կամոք, առանց վեճի՝ երրորդը այդ
Տեղը բազմեց Երկրի դուստր տիտան Փեբեն,
Որ թոռանը, երբ սա ծնվեց, իբրև պարգև
Տվեց անունը իր՝ Փեբոս, և գահը այս:
Սա, լքելով լիճն ու ժայռերը Դելոսի,
Նախ կառանեց Ատտիկեի հյուրամեծար նավակայքում,
Ապա շարժվեց դեպ սարերը Պառնասոսի, այս երկիրը:
Նրան անչափ մեծարելով ուղեկցեցին
Հեփեստոսի որդիները ուղեկառույց.
Վայրի հողը նրանք դարձրին հեշտ ճանապարհ:
Իսկ ասա՝ մարդիկ ու Դելփոսը՝ նախիշխան արքան,
Ընդունեցին եկած աստծուն հատուկ պատվով,
Եվ Զևսն իրեն, տալով ձիրքը աստվածային,
Կարգեց չորրորդ գուշակը այս գահի վրա.
Պատգամախոսն է Լոքսիասն իր հայր Զևսի:
Նախ դիմում եմ ես աղոթքով հիշյալ չորս դից,
Ապա կոչում Աթենասին, որի տաճարը հեռու չէ:
Մեծարում եմ ես Կորիկյան այրում ապրող նիմփաներին.
Այդ քարայրը դից օթևանն ու բերկրանքն է թռչունների:
Բրոմիոսն է տերն այդ վայրերի, հիշում եմ ես,
Այստեղից նա գլխավորեց մենադներին՝
Հոշոտելու Պենթևսին զերթ նապաստակի:
Աղոթում եմ և Պլիստոսի հունքին, ուժին

Պոսիդոնին, այլև Զևսին ամենազոր
Եվ գնում եմ ներս, դեպ գահը գուշակման:
Թող հաջողակ լինի իմ մուտքը առավել,
Քան նախկինում: Եթե այստեղ կան հելլեններ,
Ինչպես կարգն է՝ թող վիճակով տաճար մտնեն:
Կհայտնեմ այն, ինչ աստվածը կպատվիրի:
(Մտնում է տաճար, սակայն մի քանի վայրկյանից սարսափահար
դուրս է թռչում):
Անպատմելի, զարհուրելի՜ մի տեսարան
Ինձ դուրս նետեց կրկին տնից Լոքսիասի:
Ուժաբեկ եմ, անկար՝ շարժել ոտքերը իմ,
Ու ձեռքերս մի հենարան են որոնում,
Սարսափա՜ծ եմ ես պառավս, մանկան նման...
Երբ տաճարի պսակազարդ խորքը մտա,
Հանկարծ, հենց անդ, որտեղ որ Պորտն է Երկրի,
Տեսա նստած դիք ատելի մի այր, որպես աղերսարկու:
Նոր մերկացված նրա սրից, ձեռքից կաթում էր թարմ արյուն,
Բռնել էր նա ձիթենու մի վերձից ընձյուղ,
Եվ այդ ճյուղը, եւ պարզ տեսա, շատ խնամքով
Փաթաթված էր ճերմակափայլ մի գեղմի մեջ:
Իսկ նրանից փոքր-ինչ հեռու, նստիքներին,
Մրափել էր սահմռկելի կանանց մի խումբ:
Կանայք չէին, այլ Գորգոններ. ասենք նրանք
Տեսքով նաև Գորգոններից էին տարբեր:
Տեսել եմ ես նկարներում Փինեսի ճաշը գողացող
Հարպիաներին. նրանք ունեն թևեր, սրանք՝
Անթև էին, բայց առավել սև ու գազիր:
Խռկում էին, ժանտահոտ էր շունչը նրանց,
Իսկ աչքերից մի նողկալի լորձ էր ծորում:
Նրանց զգեստով ոչ թե տաճարը աստծո,
Այլ մարդկանց տուն անգամ մտնել չի վայելի:
Ես չգիտեմ, թե այդ խումբը ինչ ցեղից է,
Բայց ոչ մի հող չի պարծենա, որ սնելով
Նման սերունդ՝ չի զղջացել խիստ ցավագին:
Լռում եմ ես, մնացյալը թող որ հոգա
Այս տաճարի մեծազոր տեր Լոքսիասը.
Այլոց տունը մաքրագործող գուշակը և
Բուժարարը թող իր տունն էլ ապաքինի:

**(Պիթիան գնում է: Տաճարի ներսը: Քնած Էրինիաներով շրջապատված Օրեստեսին են մոտենում Ապոլլոնն ու Հերմեսը):**

ԱՊՈԼԼՈՆ.— Ես չեմ լքի քեզ, մոտիկ թե հեռու լինեմ՝
Կպահպանեմ մինչև վախճանն այս ամենի:
Ոսոխներիդ հանդեպ գթոտ չեմ լինելու:
Տե՛ս, գերի են այժմ դևերը մոլեգին,
Տապալվել է քունն էգերին այդ գարշելի,
Տարիքն առած այն կույսերին, որոնց հետ դեռ
Չի մերձեցել ոչ մի աստված, մարդ կամ գազան,
Ծնված են լոկ չարի համար, Տարտարոսի
Ստորերկրյա չար խավարում են հավետ կենում,
Ատելի են նրանք մարդկանց, աստվածներին օլիմպիական:
Փախի՛ր, սակայն կորովաբեկ դու մի՛ լինիր.
Կհալածեն քեզ երկայնքով մայր ցամաքի,
Թափառումներդ քեզ կտանեն ցամաքից դուրս,
Կանցնես ծովով, քաղաքներով ծովամիջյան:
Մի՛ վհատվիր, երբ ճաշակես տառապանքն այդ,
Իսկ երբ հասնես դու ոստանին Աթենասի,
Ծնկի՛ իջիր և գրկի՛ր կուռքը հինավուրց;
Անդ կլինեն դատավորներ, և ամոքիչ
Խոսք կլսենք. մենք կգտնենք այնտեղ միջոց
Ազատելու քեզ հավիտյան այդ լլկանքից,
Զի սպանել ես մորդ դու իմ թելադրանքով:
ՕՐԵՍՏԵՍ.— Տե՛ր Ապոլլոն, գիտես՝ արդար եմ ես վարվել,
Հայտնի է քեզ ամենն, ուստի՝ լե՛ր հոգատար.
Զորեղ ես դու բավարար, որ բարիք գործես:
ԱՊՈԼԼՈՆ.— Հիշի՛ր, ահը սիրտդ չպետք է ընկճի,
Իսկ դու, եղբա՛յր արյունակից, հորս զավակ
Հերմես, նրան պիտի հսկես. «Առաջնորդ» են
Քեզ հորջորջում, ուրեմն լե՛ր հովիվը իմ խնդրարկուի:
Պատվում է Զևսը մեծապես անձեր մարդկանց
Դեպի բարին առաջնորդող ուղեցույցին:

**(Ապոլլոնը, Հերմեսն ու Օրեստեսը գնում են: Հայտնվում է Կլիտեմնեստրայի ուրվականը):**

ՈՒՐՎԱԿԱՆ.— Ննջե՞լ եք դուք. քնածներն ո՞ւմ են պիտանի,
Անարգված եմ ես ձեզանից այլ հոգվոց մեջ:
Սպանե՞լ եմ ես, կշտամբանքն է միշտ անբաժան
Ուղեկիցն իմ մեռյալների անդրաշխարհում,

Հածո՛ւմ եմ անդ անպատիվ։ Կրկնում եմ ձեզ՝
Պարսավում են նրանք ինձ մեծ մեղադրանքով։
Անդ պատիժ կրեցի իմ հարազատից.
Սպանվածներից ոչ ոք բնավ չզայրացավ,
Երբ սրածեց մորը ձեռքը իր զավակի։
Այս վերքերին սրտով հայացք դուք նետեցեք,
Քանզի քնած հոգու աչքը սուր է, ցոլուն.
Ցերեկն անտես է մնում բախտը մարդկային։
Լափել եք միշտ դուք ընծաներն իմ բազմաթիվ,
Անգինից հեղումներ եմ ես կատարել ձեզ հաճելի,
Գիշերները, ձեր ժամին, իմ վառ օջախում
Ձե՛ր ճաշն է յոկ հուրը լափել, ո՛չ ուրիշ դից։
Եվ այդ ամենը մոռացված է, տրորվա՞ծ։
Ազատվելով՝ եղնիկի պես փախուստ տվեց,
Դյուրավ ոստնեց նա ձեր լարած որոգայթից
Ու այժմ ձեզ պարծենալով ծանակում է։
Ակա՛նջ դրեք, ողբում եմ ես հոգուս համար,
Արթնացե՛ք, ո՛վ ստորերկրյա դիցուհիներ,
Երազական Կլիտեմնեստրան ձե՛զ է կոչում։
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (քնի մեջ հառաչում է)
ՈՒՐՎԱԿԱՆ.— Հառաչում եք, իսկ նա հեռո՜ւ է, նա փախա՜վ,
Քանզի նրա բարեկամները նման չեն ձեզ։
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (հառաչում է)
ՈՒՐՎԱԿԱՆ.— Քնա՞ծ եք դուք, ողբս ձեզ չի գթաշարժում,
Ազատության մեջ է Օրեստը մայրասպան։
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (հեծեծում է)
ՈՒՐՎԱԿԱՆ.— Հեծում եք և մնում քնած, ելե՛ք շուտով,
Չարիք գործել՝ չէ՞ որ նա է ձեր պարտքը սոսկ։
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (հեծեծում է)
ՈՒՐՎԱԿԱՆ.— Քունն ու խոնջանքը՝ ուխտակիցները զորավոր,
Հյուծել են արդ մոլեգնությունը ժանտ օձի։
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (հեծեծում է կրկնակի ուժգին).— Ճանկի՛ր,
ճանկի՛ր, ճանկի՛ր, ճանկի՛ր, ձե՛ռքդ գցիր։
ՈՒՐՎԱԿԱՆ.— Քնի մեջ էլ հալածում է նա գազանին.
Դու հաչեցիր քերծեի պես՝ իր գործին միշտ
Հավատարիմ. Ե՛լ, թող քունը քեզ չընկճի,
Մի՛ ենթարկվիր ննջին՝ կականքս մոռացած։
Թող քո սիրտը կրծի արդար պախարակը իմ.

Ողջամիտի համար այն տուր խաղը պիտ լինի:
Խարանեցե՛ք նրան շնչով արյունալի,
Խարկեցե՛ք ձեր որովայնի ժահով, հրով,
Եվ թող կրկին հալածանքից նա տոչորվի՛:
**(Չքվում է):**
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Զարթնի՛ր, նրա՛ն դու զարթնեցրու,
ինչպես ես՝ քեզ:
Քնա՞ծ ես դեռ, ելի՛ր և նիրհը թոթափի՛ր,
Տեսնենք՝ արդյո՞ք նա մեզ իզուր չնախատեց:

## ՍՏԱՍԻՄՈՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— 1. Ավա՜ղ, ավա՜ղ, նախատվեցինք,
սիրելինե՛ր: **Ստրոփե 1**
2. Օ՜, ո՜րքան կորան լլկանքները իմ բազմաթիվ:
1. Եղո՜ւկ, եղո՜ւկ, տառապում եմ ես դառնորեն,
Եղո՜ւկ, չարի՜ք անտանելի,
Ուռնից, փախավ գազանը մեր որոգայթից,
2. Քնից պարտված՝ մեր որսը մենք բաց թողեցինք:

1. Ավա՜ղ, Զևսի զավակ, խարդախ գտնվեցիր: **Անտիստրոփե 1**
2. Երիտասարդ՝ անարգեցիր դու պառավ դից:
1. Դու հարգեցիր աղերսանքն այն պիղծ պատանու,
Որ դաժանն է իր ծնողի:
Աստված ես դու, սակայն փախցրիր մայրասպանին,
2. Քո արարքը ո՞վ է արդար համարելու:

1. Ինձ հայտնված նախատինքը անրջական, **Ստրոփե 2**
Խթանի պես ժանտ հեծյալի,
Խրվեց ուղիղ
Իմ կրծքի տակ, իմ սրտի մեջ:
2. Ինչպես դահճի չարալլկյալ
Մտրակի տակ,
Դողում եմ ցուրտ, անտանելի զարհուրանքից:

1. Այսպես են նոր աստվածները հիմա վարվում. **Անտիստրոփե 2**
Նրանցն է գահն Արդարության,
Բայց այդ գահը
Արյամբ պղծված է ծայրեծայր:

2. Դուք նայեցե՛ք, արյան մեջ է
Պորտն երկրի,
Հղի է այն զարհուրելի մի մեղսանքով:

1. Գուշակ աստվածն ինքնահոժար ու ինքնակոչ՝ **Ստրոֆէ 8**
Գարշ արատով
Իր սրբարանն ապականեց:
Դեմ օրենքը ոտնեց, հարգեց մարդկանց օրենքն
Ու խորտակեց Մոյրաների ավանդը հին:
2. Տրտմած եմ ես, բայց փախստականին

 բաց չեմ թողնի, **Անտիստրոֆէ 8**
Հողի տակ իսկ
Ազատություն նա չի գտնի,
Հատուցում է սպասում նրան, իր գլխին
Էլ չի փրկի նա համարյուն ոխակալից:

## ԷՊԻՍՈԴԻՈՆ ԱՌԱՋԻՆ

**(Տաճարից ելնում է Ապոլլոնը):**

ԱՊՈԼԼՈՆ.— Դո՛ւրս, շուտափույթ հրամայում եմ հեռանալ
Այս տաճարից, գուշակարանը լքեցե՛ք,
Այլապես օձն՝ արծաթաշող ու թևավոր,
Այս ոսկեթել ու պիրկ լարից առաքվելով,
Ձեզ կստիպի ցավից ժայթքել սև փրփուրով
Մակարդները մարդկանց արյան, որ լակել եք:
Սազական չէ ձեզ գտնվել այս տան ներսում,
Այլ այնտեղ, որտեղ դատ վարելով կուրացնում են,
Կառափնատում, քարկոծում և ամորձատում,
Ուր մանկածին սերմն է հոսում անպտղացած,
Ուր լսվում են ցցի հանված թշվառների
Տառանչները սրտակեղեք: Լսեք թե ինչ
Տոներ են ձեզ միշտ սիրելի, ահա ինչու
Գարշ եք դուք դից: Նողկալի եք նաև տեսքով,
Կվայելեր ձեզ արնախում մի առյուծի
Այրում կենալ, այլ ոչ թե ձեր ներկայությամբ
Աղարտել այս սրբավայրի պերճությունը:
Արդ, հեռացե՛ք, և ինքնե՛րդ, առանց հովվի,

Զի ձեր հոտը հանելի չէ ոչ մի աստծու:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Տե՛ր Ապոլլոն, դու ակա՛նջ դիր
մեզ քո հերթին.
Ոճիրի մեջ ոչ թե եղար լոկ հանցակից,
Այլ ձեռնարկող, ամբողջը ինքդ արեցիր:
ԱՊՈԼԼՈՆ.— Ինչպե՞ս, մեկնի՛ր. կտամ այդչափ քեզ ժամանակ:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Դո՛ւ դրդեցիր այն օտարին
մորը սպանել:
ԱՊՈԼԼՈՆ.— Ես դրդեցի վրեժ լուծել իր հոր համար:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Եվ այդպիսով նոր արյունի
պատճառ դարձար:
ԱՊՈԼԼՈՆ.— Մաքրագործման համար եկավ նա իմ տաճար:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ուղեկիցն ենք նրա,
ինչո՞ւ ես մեղադրում:
ԱՊՈԼԼՈՆ.— Պատշաճ չէր ձեզ այս տաճարի մեջ ոտք դնել:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Սակայն չէ՞ որ մեր պա՛րտքը
այդ ստիպեց անել:
ԱՊՈԼԼՈՆ.— Ի՞նչ պարտք է դա, պարծեցի՛ր մեծ պարգևով:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Մայրասպանին արտաքսում
ենք մենք տներից:
ԱՊՈԼԼՈՆ.— Իսկ երբ կինը սպանում է իր ամուսնակցի՞ն:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Արյունակցի արյուն չէ
նա թափում այդկերպ:
ԱՊՈԼԼՈՆ.— Ուրեմն՝ սի՞ն է, անարժե՞ք բոլորովին
Ուխտը Զևսի ու անարատ կին Հերայի:
Անպատիվ է անում այդ խոսքը Կիպրուհուն,
Որ տալիս է մարդկանց բերկրանքը մեծագույն:
Մահիճը, ուր բախտն է կապում կնոջն այրին,
Սուրբ է ամեն ուխտից, Դիկեն է այն հսկում:
Եվ եթե դու բաց ես թողնում այրասպանին,
Չես հալածում ցասմամբ ու չես պատուհասում՝
Մեղք ես գործում՝ Օրեստեսին վտարելով.
Մի մեղանքը կատաղեցրել է քեզ սաստիկ,
Իսկ մյուսի հանդեպ՝ ներող ես չափազանց:
Ոչ, թող վեճը լուծի Պալլաս աստվածուհին:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Բայց և այնպես՝ ձեռք չեմ
վերցնի ես այդ այրից:
ԱՊՈԼԼՈՆ.— Հետապնդի՛ր. մի՛ խնայիր ջանք ու եռանդ:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Դու մի՛ ծաղրիր ծառայությունն
իմ պատվավոր:
ԱՊՈԼԼՈՆ.— Այդ պատիվը իբրև նվե՛ր էլ չեմ ուզի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Այո՛, քանզի Զևսի գահի մոտ
մեծ ես դու:
Իսկ ես... Արյունն է առաջնում ինձ մայրական:
Պիտի նրան հետապնդեմ՝ ինչպես որսի:
(Երգչախումբը հեռանում է):
ԱՊՈԼԼՈՆ.— Նեցուկ, փրկիչ պիտի լինեմ խնդրարկուին,
Զի ահեղ է աստվածների և մարդկանց մեջ
Աղերսողի քենն, երբ նրան լքում ես դու:
(Գնում է):

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Աթենք: Աթենասի տաճարը: Օրեստեսը ծնրադրած գրկել է աստվածուհու կուռքը):
ՕՐԵՍՏԵՍ.— Ո՛վ տիրուհի Պալլաս, եկա այստեղ կամքով
Լոքսիասի. վրեժխնդրին դու ընդունի՛ր
Ողորմաբար: Էլ մեղսոտ չեն ձեռքերը իմ,
Բթացել է ցավը մեղքի, զի հածել եմ
Ես մարդկանց մեջ, օջախներում օտարների:
Կտրել եմ ես ծով ու ցամաք և, տե՛ս, հիմա,
Լոքսիասի խոսքին հլու, եկա այստեղ,
Ո՛վ դիցուհի, դեպ տաճարն ու արձանը քո.
Այստեղ պիտի մնամ, սպասեմ դատավճռի:
(Գալիս է երգչախումբը):
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Եկե՛ք, անշուշտ սրանք
հետքերն են այդ այրի,
Հետևեցե՛ք մունջ մատնիչի ցուցմունքներին:
Այսպես շունը վիրավորված վիթի արյան
Կաթիլներով հետապնդում է նրան, գտնում:
Ծանր է շնչում կուրծքս, սաստիկ տառապեցի.
Անցել եմ ես այս երկրի ողջ երկայնքով,
Անթև թռել ծովով՝ նրան միշտ հետամուտ.
Նրա նավից դանդաղ չէի ես սլանում:
Այդ, զգում եմ, թաքնված է աստ ինչ-որ տեղ,

Ձի մարդկային
Արյունի հոտ եմ ես առնում:

ԴԱՐՁՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԿՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Նայի՛ր, նայի՛ր, շրջակայքը
լավ պրպտի՛ր,
Որ չփախչի
Այդ մայրասպանը անպատիժ:
ԵՐՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Անտարակույս՝ դարձյալ պաշտպան է
նա գտել՝
Ծնրադրելով աստվածուհու արձանի մոտ.
Դատ է սպասում իր բազուկի գործի վրա:
ՉՈՐՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Անհնար է, որ դա լինի, քանզի թափված
Արյունը մոր, ավա՜ղ, ավա՜ղ,
Ներքաշել է հողը անդարձ:
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Դրա դիմաց՝ ես կենդանի
քո մարմնից
Կծծեմ ողջ հյութը կարմիր,
Կկլանեմ իսպառ ամեն ըմպելիքն այդ:
ՎԵՑԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Սմքած՝ հողի տակ կխուժես
դու կենդանի,
Կհատուցես այդկերպ մորդ մահվան համար:
ՅՈԹԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Անդ կտեսնես, որ մեղսագործ
բոլոր մարդիկ,
Որոնք աստծու և կամ հյուրի են անարգել,
Կամ մեղանչել ծնողների դեմ հարազատ,
Միշտ կրում են իրենց պատիժը վաստակած:
ՈՒԹԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Մեծ Հադեսն է դատավորը
մարդկանց այնտեղ՝
Երկրի ներքո,
Գրանցում է իր սրտի մեջ նա ամեն բան:
ՕՐԵՍՏԵՍ.— Աղետները ինձ ուսուցել են, ես լավ գիտեմ
Մաքրագործման ձևերը ողջ, գիտեմ, թե երբ
Հարկ է խոսել և երբ՝ լռել: Այս դեպքում ինձ
Պատվիրել է խոսել գիտուն ուսուցիչն իմ:
Ձեռքիս նեխել է արդ արյունը, ցամաքել,

Մաքրված եմ ես մեղսանքից մայրասպանի։
Թարմ էր այն դեռ, մինչ Փեբոսի օջախի մոտ
Խոզի արյամբ մաքրագործումն իրագործվեց։
Խոսքս սաստիկ պիտ երկարի, եթե թվեմ
Նրանց, ովքեր ինձ հետ շփվել են անվնաս։
Ծերանում ենք, և մաքրում է ժամանակը ամեն մի բիծ...
Արդ, անարատ բերանով եմ ես քեզ կոչում,
Ո՜վ Աթենաս, այս երկրի մեծ տիրուհի.
Եկցո՛ւկ եղիր, ու դու առանց ձեռք կբերես
Ինձ, իմ հողը և արգոսյան ժողովրդին,
Հար կմնանք դաշնակիցը քո անխարդախ։
Գուցե այժմ երկրում՝ ես դու Լիբիական,
Քեզ հարազատ հոսանքի մոտ Տրիտոնիսի.
Նստած ես կամ ոտքի վրա օգնում ես դու
Ժողովրդին՝ քո սիրելի։ Գուցե հսկում ես Փլեգրեյան,
Դիտում ես այն ինչպես խիզախ այր զորավար։
Ինչևիցե, աստվածները հեռվում են մեզ լսում.
Արդ, հայտնվի՛ր, ազատարա՛րս դու եղիր։
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ո՛չ Լոքսիասը, ո՛չ զորությունն
Աթենասի
Չեն սատարի քեզ, կկորչես արհամարհված։
Սիրտդ երբեք խնդություն չի ճաշակելու,
Կլինես մի անարյուն ստվեր, դևերի լափ։
Պատասխան չե՞ս տալիս, խոսքս քամահրո՞ւմ ես։
Ինձ համար ես քեզ սնուցել, և իմ զոհն ես
Դու կենդանի, զոհարանի՛ն չես մորթվելու։
Արդ, ականջ դիր երգիս, ահից ընդարմացի՛ր։

Եկա՛ք, խմբապա՛ր եկեք մենք բռնենք,
Հասել է ժամը,
Որ զարհուրելի այս երգը երգենք։
Պատմենք՝ մեր խմբին ինչ է վիճակել
Ճակատագիրը մարդկության հանդեպ։
Մեր քննությունն է՝ միշտ արդար լինել.
Նրան, ով ձեռքերն անեղծ է պահում,
Չենք հետապնդում մենք մոլեգնաբար,
Կանցնի նա կյանքի ուղին անչարիք։
Բայց եթե մեկը, ինչպես այս այրը, մեղսանք գործելով,

Փորձի թաքցընել ձեռքերն աղյուսոտ,
Հանգուցյալների՝ վկաներն արդար,
Մեզ վրիժառու կկարգեն արյան,
Եվ կհաղթենք նրա՛ն ի վերջո:
(Երգչախումբը պար է գալիս Օրեստեսի շուրջը):

## ՍՏԱՍԻՄՈՆ ԱՌԱՋԻՆ

**Ստրոփե 1**

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Մա՛յր ինձ ծնած, մա՛յր իմ Գիշեր,
Չէ՞ որ դու ինձ մեռյալների ու ողջերի
Համար իբրև վրիժառու աշխարհ բերիր:
Օ՜, ակա՛նջ դիր, Լետոյի զավակն ինձ անարգեց,
Խլեց ինձնից այս փախստականին,
Մինչդեռ օրենք է, որ քավի
Նա արյունը իր մայրական:

Իմ զոհին եմ այժմ ձոնում
Ես մեղեդին այս մոլեգին,
Հոգեկործան ու խենթ երգը
Էրինիսներ ժանտ քույրերի.
Անքնար իմ հիմնից ամբում,
Փայտանում է միտքը մարդկանց:

**Անտիստրոփե 1**

Ինձ վիճակված գործն այդ անգութ
Մոյրան ինքն է մանել, անխախտ պարտքն է դա իմ:
Մերձավորաց արյուն թափող լկիրշ մարդկանց
Ուղեկիցն ենք մենք անբաժան, երկրի տակ էլ
Հալածում ենք նրան հավետ,
Մեռնելով էլ նա չի գտնում
Լիակատար ազատություն:

Իմ զոհին եմ այժմ ձոնում
Ես մեղեդին այս մոլեգին,
Հոգեկործան ու խենթ երգը
Էրինիսներ ժանտ քույրերի.
Անքնար իմ հիմնից ամբում,
Փայտանում է միտքը մարդկանց:

**Ստրոփե 2**

Մեզ ի ծնե բաժին ընկավ
Վիճակը այդ. լոկ՝ հարկ է ինձ

Անմահներից հեռու պահել
Ձեռքերը իմ, ոչ մի աստված
Մեղսակից չէ ինձ երբեք:
Ինձ համար չեն հանդերձները սպիտակաթույր,
Ծոփ տոներին չեմ մասնակցում,
Զի ընտրանքն իմ այլ է՝ տներ եմ խորտակում,
Երբ Արեսն, անդ բուն դրած,
Կյանք է խլում արյունակցի:
Այնժամ, զոհիս հալածելով,
Որքան էլ նա զորեղ լինի,
Մարում եմ կյանքն իր թարմ արյամբ:

**Անտիստրոֆէ 2**

Ջանում եմ ես միշտ ազատել
Այլոց նման մտմտանքից,
Քանզի այդ դիք օրենն է որ
Անմաս մնան ինձ վիճակված
Փույթից, դատից մեղսոտ մարդկանց.
Նրանց զարմը՝ արյամբ պղծված ու խորշելի,
Քամահրում է Զևսը հավետ:
Փախստականին ես ամենուր
Վերից հասնում եմ ու ճզմում
Ծանրածանր իմ կրունկով:
Զուր կփութան ոտքերն արագ,
Չի փրկվի նա մեղքից անեղ:

**Ստրոֆէ 3**

Գոռ փառքն արանց,
Երբ անցյալ հասնի եթեր,
Պիտ կործանվի, անպատվությամբ հողին հասնի՝
Սևահանդերձ մեր այս խմբի հարձակումից,
Մեր ոտերիմ խմբապարից:

**Անտիստրոֆէ 3**

Իր անկումը
Նա չի զգում, գիտակից չէ,
Զի մեղքը դեպ այրն է թռչում մեգով պատված,
Սակայն հանկարծ՝ կհամբավի դաժան մի գույժ.
«Տանը սև թուխպն է տիրացել»:

**Ստրոֆէ 4**

Մի տեսակն օրենք է դա.
Ճարտար ենք միշտ չարիք նյութում
Մենք՝ դիպուկ, սուրբ դիցուհիք,

Անողոք ենք մարդկանց հանդեպ:
Չեն մեծարում մեզ, վտարված,
Հավետ հեռու դից կաճառից՝ կենում ենք մենք
Անլույս մեգում, և ո՛չ մեռյալ, ո՛չ ողջ մարդիկ
Չունեն ուղի մեզ հասնելու:

**Անտիստրոֆե 4**

Կա՞ արդյոք մի մահկանացու,
Որ չդողա, չզարհուրի՝
Լսելով իմ ուժի մասին:
Բախտն ինքն է ինձ այն շնորհել,
Աստվածներն էլ հաստատել են.
Անխախտ է դեռ պարգևն այդ հին, իշխում եմ ես՝
Ոչ անպատիվ, թեպետ կենում եմ երկրի տակ,
Անարև, մութ խավարի մեջ:

## ԷՊԻՍՈԴԻՈՆ ԵՐՐՈՐԴ

**(Հայտնվում է Աթենաս):**

ԱԹԵՆԱՍ.— Հեռու երկրում ինձ բարձրալուր մի կանչ հասավ.
Հածում էի Սկամանդրի մոտ, այն եզերքում,
Որ, լավ գիտեք, առաջնորդներն աքեական
Առհավետ ինձ նվիրեցին ամբողջովին.
Դա նվաճված ինչքից բաժինն է իմ հնկա,
Մեծ Թեսևսի որդիների ընտիր ընծան:
Արդ, իմ անխոնջ ոտքերով ես անթև թռա՝
Սավառնելով կլոր վահանս սուլոցով,
Ասես կառքով թռցնում էին ինձ հաղթ ձիեր:
Բայց տեսնում եմ արտասովոր մի խումբ այստեղ.
Չեմ երկյուղում, տեսածս լոկ ինձ ապշեցրեց:
Ո՞վ եք արդյոք, բոլորիդ եմ հարցս ուղղում,
Քեզ, ո՛վ կուռքիս առջև ծնկած օտարական,
Եվ ձեզ, կանա՛յք, գոյակների ի՞նչ ցեղ եք դուք:
Չեն տեսել դիք աստվածների ու մարդկանց մեջ
Կերպարանքով ձեզ նմանվող էակների:
Չեմ պարսավում, անարդար է վատաբանել
Հարևանին տգեղության համար միայն:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Դո՛ւստր Զևսի, քեզ պատասխան կտամ հակիրճ.

Չարակներն ենք հավերժական մութ Գիշերվա,
Ստորերկրյա տանն անվանում են մեզ Անեծքներ:

ԱԹԵՆԱՍ.— Արդ, իմացա անունը ձեր ցեղին տրված:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Հիմա նաև մեր զբաղմունքը
դու կիմանաս:

ԱԹԵՆԱՍ.— Այո՛, եթե հասկանալի խոսք ինձ կասես:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Մարդասպանին հալածում ենք
մենք տներից:

ԱԹԵՆԱՍ.— Եվ որտե՞ղ է վերջը նրա թափառումի:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Անդ, ուր բնավ ընտելացած չեն
բերկրանքի:

ԱԹԵՆԱՍ.— Դրանով ես սպառնում և ա՞յս փախստականին:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Հանդգնել է սպանել նա մորն
իրեն ծնած:

ԱԹԵՆԱՍ.— Չի՞ երկնչել նա այլ Պարտքի բարկությունից:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ի՞նչ խթան է, որ պիտի դրդի
մորն սպանել:

ԱԹԵՆԱՍ.— Բայց ես միայն մեկ կողմի խոսքը լսեցի:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Նա չի երդվի, ոչ էլ երդում
կպահանջի:

ԱԹԵՆԱՍ.— Դու ուզում ես թվա՛լ արդար, այլ ոչ լինել:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ինչպե՞ս, մեկնի՛ր. իմաստությամբ
հարուստ ես դու:

ԱԹԵՆԱՍ.— Անարդարը երդմամբ էլ չի հաղթանակի:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ուրեմն՝ դու դատի՛ր, վճռի՛ր
արդարորեն:

ԱԹԵՆԱՍ.— Արդ, դուք գործի վճիռը ի՞նձ եք վստահում:

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Հարկավ, քանզի պատվելի է
արժանավորն արժանապես:

ԱԹԵՆԱՍ.— Ո՜վ հյուր, իսկ դո՞ւ ինչ կխոսես. արդ քո հերթն է:
Անվանիր քո երկիրն, ծնունդն ու չարիքը
Քեզ վիճակված, պարսավանքից քեզ պաշտպանվի՛ր:
Վստահ արդար լինելու մեջ՝ գրկել ես դու
Կուռքս, ծնկել իմ սրբազան օջախի մոտ:
Խնդրարկու ես, նման արքա Իքսիոնին:
Այս ամենին դու դյուրահաս պատասխան տուր:

ՕՐԵՍՏԵՍ.— Ո՜վ տիրուհի Աթենաս, նախ քեզ կազատեմ
Վերջին խոսքիդ մեջ առկա մեծ մտմտանքից:

Կոտքիդ առաջ, գիրթ աղերսող, ես չեմ ծնկել՝
Ունենալով ձեռքերիս մեջ մեղսանքի թիծ:
Քեզ կբերեմ այժմ զորեղ մի ապացույց.
Օրեն է, որ ոճրագործը անխոս մնա,
Քանի դեռ նա չի մաքրվել մի նորածին
Անասունի մաքրագործող թարմ արյունով:
Վաղուց արդեն ես տներում օտարների
Սրբագործվել եմ տաք արյամբ, հոսուն ջրով:
Ասում եմ սա, որ այդ փույթից ազատ լինես,
Իսկ ծննդիս մասին իսկույն դու կիմանաս.
Արգոսցի եմ, և հայրը իմ, ում լավ գիտես,
Ագամեմնոնն է՝ առաջնորդը նավերի,
Իլիոն քաղաքը նրա հետ կործանեցիր:
Տուն դառնալով՝ նա զոհ գնաց անարգաբար,
Նրան սպանեց սևահոգի մայրն ինձ ծնած՝
Թակարդելով մի երփներանգ ծածկոցի մեջ.
Լոգարանն է վկան նրա բիրտ սպանության:
Ես տարագիր էի մինչ այդ, ապա դարձա
Եվ սպանեցի մորս, բնավ դա չեմ հերքում.
Վրեժն էր այդ իմ սիրելի հոր օրհասի:
Իմ հանցանքի դրդիչն ինքը՝ Լոքսիասն էր.
Նա գուշակեց, որ ցավը սիրտս կխայթի,
Եթե մահվամբ մեղսագործներն չհատուցեն:
Արդ, որոշիր՝ իրավացի՞ եմ ես, թե՞ ոչ,
Քո ցանկացած վճիռ հոժար ես կընդունեմ:

ԱԹԵՆԱՍ.— Դժվարին է գործը, մեկ մարդ այն չի դատի,
Սակայն և ինձ վայելուչ չէ այժմ քննել
Մոլուցքի մեջ կատարված այդ սպանությունը:
Ընդունում եմ՝ իմ տաճարը մուտք ես գործել
Դու անարատ, մաքրագործված. ապահով ես
Ու անպարսավ, քեզ տեղ կտամ քաղաքիս մեջ:
Սակայն սրանց նույնպես դյուր բախտ չի վիճակվել,
Եվ եթե այս գործում նրանք քեզ չհաղթեն,
Մոլեգնելով՝ ողջ իմ երկրում իրենց թույնով
Կսերմանեն չարաղետ ախտ անտանելի:
Վարանած եմ. երկու ելքն էլ՝ պահել նրանց,
Թե վտարել՝ աղետալի պիտի լինեն:
Բայց քանի որ այդ գործը ինձ է վիճակվել,

Ընտրեմ երդվյալ դատավորներ այդ սպանության
Եվ դարերի համար ատյան աստ կհիմնեմ:
Դուք՝ փաստարկներ, ապացույցներ կուտակեցեք,
Արդարությանը երդումով սատարեցեք:
Իմ քաղաքից կընտրեմ մարդկանց ազնվագույն,
Որ դիպվածը դատեն նրանք անկողմնակալ՝
Իրենց ուխտին չխառնելով խարդախություն:
(Գնում է):

## ՍՏԱՍԻՄՈՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Խորտակված է ամեն ավանդ, **Ստրոֆե 1**
Եթե այժմ նոր օրենքով
Հաղթանակեն մեղսավորը և
Իրավունքը մայրասպանի:
Կգայթակղի բոլոր մարդկանց
Այս ոճիրի ելքը հաջող,
Եվ ծնողներն այսուհետև
Կկրեն բյուր տառապանքներ
Անխական քինոտ զավակներից:

Քանզի մարդկանց հավետ հսկող **Անտիստրոֆե 1**
Մենադների ցասումն էլ
Նրանց գործերը չի զսպի:
Ուրիշն աղետի պիտի հասցնի.
Օտարը չարիք լոկ տեսնելով՝
Մարդիկ միմյանց պիտ աղերսեն
Դադար, դարման աղետների,
Բայց ամոքիչ սպեղանիներ
Դժբախտը զուր պիտի փնտրի:

Այնժամ ոչ ոք, չարիքների **Ստրոֆե 2**
Հարվածներից տառապահար,
Թող չկանչի մեզ գոռալով.
«Արդարությո՛ւն, Էրինիսնե՛ր, որտե՞ղ է ձեր
Զորությունը»: Անշուշտ այդպես
Գոչում մի հայր կամ լլկյալ մայր
Պիտի ողբա հառաչալից,

Երբ քանդվի տունն արդարության:

Անտիստրոֆե 2

Երբեմն վախն օգտակար է,
Եվ անհրաժեշտ է, որ հսկի
Սրտին՝ նրա մեջ բազմելով:
Տվայտանքը ուսուցում է խոհեմություն.
Եթե սիրտն ահը չանի,
Կգտնվի՞ արդյոք մի մարդ,
Կգտնվի՞ մի ժողովուրդ՝
Արդարությունը մեծարող:

Ստրոֆե 3

Ո՛չ գոյությունը անիշխան,
Ո՛չ բռնությունը քեզ վրա
Մի՛ դրվատիր:
Ամեն բանում
Միջինին են դիք ուժ տվել,
Նրանց՝ խայտառումը հաճո չէ:
Ճշմարիտ խոսք ես ձեզ կասեմ.
Բարքն անաստված
Ծնում է լոկ հանդգնություն,
Առողջ հոգին՝
Զարմ ամենքին միշտ սիրելի՝
Փափագելի երջանկություն:

Անտիստրոֆե 3

Արդարության զոհարանից
Երկյուղածիր դու հավիտյան,
Եվ, հետամուտ
Շահի, դու այն
Մի տրորիր պիղծ ոտքերով,
Զի կապառի քեզ հատուցում
Ժանտ Օրհասից հզորագոր:
Պատվիր պատշաճ
Պատկառանքով ծնողներին,
Ակնածանքով,
Հյուրամեծար քո հարկի տակ
Դու մեծարիր միշտ հյուրերին:

Ստրոֆե 4

Ով արդար է
Առանց օտար հարկադրանքի,
Նա կլինի բարեբաստիկ,

Եվ կործանիչ անհատունակ:
Իսկ ով մնաց խառնակ հորձանքն է մխրճվում,
Գոռոզաբար, լկտիաբար արդարությունը անարգում,
Երբեք ստիպված նա կիջեցնի առագաստն իր,
Հանգի չարյաց փոթորիկից
Կոտրատակվի կայմն իր նավի:

Անտիստրոֆե 4

Կաղաղակի
Նա հողմի մեջ անդիմադիր,
Բայց ձայնն իր չի լսի ոչ ոք:
Աստվածներն դիք գոռ այրին՝
Տեսնելով, որ աղետի դեմ նա անզոր է.
Էլ խրոխտ չէ, անկարող է կոհակներից խուսանավել:
Այդպես նախկին օրերի նավը հաջողակ,
Արդարության խութին զարկված՝
Պիտի կորչի անհայտ, անսուգ:

## ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

(Գալիս են Աթենասը, դատավորները և մի մունետիկ):
ԱԹԵՆԱՍ.— Հնչի՛ր, մարդկանց հանդիպարարը՛, ո՛վ մունետիկ,
Թող տիրրենյան փողի զիլ ձայնը երկինք հասնի:
Փողահարի՛ր ամբողջ շնչով քո մարդկային,
Թող ամբոխը դատարանում հնչյուն լսի:
Արդ, երբ արդեն հավաքված է խորհուրդը մեր,
Պետք է լռել և ուսանել օրենքը իմ,
Որ առհավետ սահմանել եմ ես քաղաքին.
Դատավորներն արդար վճիռ պիտի հանեն:
(Գալիս է Ապոլլոնը):
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ.— Տե՛ր Ապոլլոն, գնա՛,
զբաղվի՛ր քո հոգսերով,
Ինչո՞ւ ես այս գործին դառնում դու մասնակից:
ԱՊՈԼԼՈՆ.— Եկել եմ ես որպես վկա, զի այս այրը
Ապավինել է իմ տաճարին իբրև աղերսարկու.
Ես եմ նրան մաքրագործել այդ ոճիրից:
Դատին ինքս նրան պաշտպան պիտի կանգնեմ,
Զի նրա մոր սպանության մեղսակից եմ:
([illegible])

Սկսի՛ր դատը, վարի՛ր դու այն ինչպես գիտես:
ԱԹԵՆԱՍ.— Սկսեցե՛ք, դատն ազդարարում եմ ես բացված.
Նախ թող խոսեն մեղադրողները՝ ի սկզբանե
Ճշմարտաբար ծանուցելով մեզ այդ գործին:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Այստեղ մենք շատ ենք,
բայց համառոտ պիտի խոսենք:
(Օրեստեսին)
Մեր հարցերին այժմ հերթով պատասխան տուր:
ԵՐԿՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Նախ դու ասա՛, սպանե՞լ ես մորդ
իսկապես:
ՕՐԵՍՏԵՍ.— Սպանել եմ, այո ես չեմ ժխտի ամենևին:
ԵՐՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Մեկ միավոր արդեն կորցրիր
դու երեքից:
ՕՐԵՍՏԵՍ.— Պարտված չեմ դեռ, ժամից վաղ մի՛ մեծաբանիր:
ՉՈՐՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Արդ, հարկ է քեզ ասել՝
ինչպե՛ս դու սպանեցիր:
ՕՐԵՍՏԵՍ.— Սուրն այս ձեռքով նրա կոկորդը խրեցի:
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Ո՞վ հանոզեց, խորհուրդ տվեց
այդպես վարվել:
ՕՐԵՍՏԵՍ.— Գուշակ աստվածն, ով որ հիմա վկան է:
ՎԵՑԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Ուրեմն՝ մորդ քեզ աստվա՞ծ դրդեց
սպանել:
ՕՐԵՍՏԵՍ.— Այո՛, և հար իմ բախտը ես չեմ պարսավի:
ՅՈԹԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Երբ վճիռդ հանեն, այլկերպ դու
կխոսես:
ՕՐԵՍՏԵՍ.— Հուսամ՝ հայրս շիրմից նեցուկ ինձ կառաքի:
ՈՒԹԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Դու, մայրասպա՛ն, մեռելնե՞րն ես
ապավինում:
ՕՐԵՍՏԵՍ.— Պղծված էր իմ մայրը երկու ոճիրներով:
ԻՆՆԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Ինչպե՞ս, մեկնի՛ր. դատավորները
թող խորհեն:
ՕՐԵՍՏԵՍ.— Սպանելով իր այրին՝ նաև իմ հորն սպանեց:
ՏԱՍՆԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Բայց ողջ ես դու, իսկ նա մեղքն իր
քավեց մահվամբ:
ՕՐԵՍՏԵՍ.— Երբ ողջ էր նա, ինչո՞ւ ձեզնից չէր հալածվում:
ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Զի համարյուն այրի չէր նա
գրկել կյանքից:
ՕՐԵՍՏԵՍ.— Մի՞թե նման մի մոր հետ ես համարյուն եմ:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԷՐԻՆԻՍ.— Ինչպե՞ս կարող էր քեզ սնել
Նա արգանդում.
Օ՜ ոճրագործ, ուրանո՞ւմ ես արյունը մոր:
ՈՐԵՍՏԵՍ.— Վկա՛ս եղիր, պաշտպա՛ն կանգնիր ինձ, Ապոլլո՛ն,
Եթե իրոք արդարորեն եմ ես սպանել:
Չժխտեցի, ինչ արել եմ՝ այն արված է.
Սակայն իրավ եմ ես, թե ոչ՝ ինքդ վճռիր,
Ինչ դու վճռես՝ ա՛յն էլ կասեմ ես ատյանին:
ԱՊՈԼԼՈՆ.— Ձեզ եմ դիմում, աթենակա՛ն դատավորներ,
Իրավ է նա. գուշակ եմ ես ու չեմ ստում:
Իմ գահից ես դեռ չեմ հայտնել գուշակություն
Ոչ մի այրի, ոչ մի կնոջ կամ քաղաքի՝
Առանց Զևսի հրամանի. դից հայրն է նա:
Խորհեցե՛ք այս ճշմարտության ուժի մասին
Եվ Հոր կամքին միշտ հնազանդ դուք մնացեք,
Զի ձեր ուխտը երբեք զորեղ չէ Դիոսից:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Դու ասում ես, որ Զևսն ի՞նքը
Քեզ թելադրեց
Օրեստեսին պատգամել, որ հորը սպանած
Իր ծնողին զրկի ամեն մեծարանքից:
ԱՊՈԼԼՈՆ.— Վայելո՞ւչ է բաղդատել մահն ազնիվ այրի,
Որին Զևսը մեծարել էր գավազանով,
Մի նենգ կնոջ վախճանի հետ: Եվ ո՛չ մարտում,
Ամազոնի սրաթռիչ ու հեռահար
Նետի՛ց չընկավ: Ականջ դրեք, ո՛վ Աթենաս,
[illegible] հավաքված դատավորներ այս դիպվածի:
Արշավանքից նա, փառապսակ ու հաջողակ,
Դարձավ իր տուն: Կինն ընդունեց նրան բերկրուն,
Բաղնիք տարավ, բայց երբ ջրից պիտի ելներ,
Գլխին անել ծածկոց նետեց, ինչպես վրան,
Ու պերճ սքողով այրին սանձած՝ նա հարվածեց...
Այսպիսին էր նրա վերջը, ձեզ պատմեցի
Մահը տոհմի առաջնորդի, ազգը մարդու,
Եվ սա ասեցի, որ ցասումը կրծի, լլկի
Ձեր սրտերը, զի դատը դո՛ւք պիտի վճռեք:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ըստ քեզ՝ Զևսը նախապատվում է
Հայրերին:
Ինչո՞ւ հապա շղթայեց իր հայր Կրոնոսին.

Այդ արարքին խորքերդ չեն հանդուրժում:
Լսեցե՛ք այս, դատավորնե՛ր, վկա եք դուք:
ԱՊՈԼԼՈՆ.— Օ՜, զարշ հրեշ, աստվածներին հակակրելի,
Չէ՞ որ շղթյան միշտ միջոց կա խորտակելու,
Ազատության բյուր միջոցներ կգտնվեն:
Բայց երբ հողը կլանել է արյունն այրի,
Մեռյալ՝ երբեք էլ հարություն նա չի առնի:
Հայրս անգամ դրա հմայքը չգիտե.
Նա՛, որ առանց շնչակտուր իսկ լինելու,
Ի զորու է շրջել ամեն բան գլխիվայր:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Հապա ինչպե՞ս ես պաշտպանում
դատը նրա,
Ով հարազատ մոր արյունը հեղեց հողին:
Ինչպե՞ս կապրի նա Արգոսում, իր հոր տան մեջ,
Եվ կդիպչի բագիններին հասարակաց,
Ո՞վ կխմի նրա հետ ջուրը սրբազան:
ԱՊՈԼԼՈՆ.— Այդ էլ կասեմ, և խոսքս առույգ է, իմացի՛ր:
Զավակի ծնողը նա չէ, ով մայր է կոչվում.
Նա սերմանված պտուղի սոսկ սնուցողն է:
Հայրն է ծնում, մայրը՝ զավակին, ինչպես հյուրի,
Ընդունում է, եթե դիքը չեն եղծում նրան:
Արդ, ձեզ ցույց տամ իմ խոսքերի ապացույցը.
Հայրը ծնում է առանց մոր, ահա ձեր կողքին
Գտնվում է օլիմպացի Զևսի դուստրը:
Չի սնուցվել նա արգանդի խավարի մեջ.
Ի՞նչ դիցուհուց նման զավակ ծնունդ կառներ:
Ես, ո՜վ Պալլաս, ինչ չափով որ ունակ լինեմ,
Պիտի զորացնեմ քաղաքը քո, զորքը նրա,
Սրան էլ ես առաքեցի քո օջախը,
Որ հավիտյան հավատարիմ լինի նա քեզ,
Հանձին նրա՝ դու ձեռք բերես նոր դաշնակցի:
Հավերժ նրա հետնորդները սերնդակից
Պիտի հարգեն ձեր այս դաշինքը անխարդախ:
ԱԹԵՆԱՍ.— Արդ, սրանց պիտի հրամայեմ խղճի մտոք
Քվեարկել, զի բավարար խոսվեց այստեղ:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ես իմ բոլոր նետերն արդեն
արձակեցի,
Մնում է սոսկ սպասել լուծմանը այս վեճի:

ԱԹԵՆԱ (Ապոլլոնին և Օրեստեսին).— Իսկ դո՞ւք,
ինչպե՞ս խուսափեմ ձեր մեղադրանքից:
ԱՊՈԼԼՈՆ.— Ինչ ասված է՝ այն ասված է. քվեարկելիս
Հարգեցե՛ք ձեր ուխտն, ո՛վ օտար դատավորներ:
ԱԹԵՆԱ.— Ատտիկեի մարդի՛կ, օրենքս լսեցե՛ք:
Առաջին անգամ՝ արյան դատ եք այստեղ վարում.
Այսուհետ էլ թող Էգեոսի ժողովրդի
Այս ատյանը հավերժորեն գոյատևի
Արես աստծու բլրի վրա: Ճամբար էին
Այստեղ զարկել ամազոնները, երբ կռվով
Թեսևսի դեմ արշավեցին: Հին պարսպի դիմաց նրանք
Կառուցեցին բարձրաշտարակ մի նոր քաղաք
Եվ ձոնեցին այն Արեսին. այստեղից էլ՝
Անվանումը՝ Արեոպագոս: Թող բլուրն այս
Գիշեր ու զօր վախ, ակնածանք ձեզ ներշնչի
Եվ ետ պահի քաղաքացվոց մեղանչելուց:
Քաղաքում հար թող իմ օրենքը չանտեսվի.
Երբ վճիտ գետը տղմոտ վտակներով ապականվի,
Էլ նրա մեջ չի գտնվի խմելու ջուր:
Իմ հորդորն է քաղաքացվոց՝ չհանդուրժել
Ո՛չ բռնություն, ո՛չ անիշխան գոյակցություն:
Ձեր քաղաքից երբեք երկյուղը մի վանեք.
Անհոգ անգետ՝ ոչ մեկը չի մնա շիտակ:
Արդա՛ր եղեք, երկյուղեցե՛ք մեծապատիվ այս ատյանից
Եվ ձեր երկրին, ձեր քաղաքին ձեռք կբերեք
Փրկիչ հենակ, որպիսին ոչ մի ազգ չունի
Ո՛չ սկյութական, ո՛չ Պելոպսի եզերքներում:
Թող անկաշառ մնա ատյանը հավիտյան,
Վեհապատիվ ու խիստ դատող, քանզի ես այն
Կարգել եմ զերթ արթուն հսկիչ քնածներին:
Երկարաձիգ է խրատն իմ, ո՛վ քաղաքացիք,
Ուղղված է այն և գալիքին: Այժմ հարկ է ոտքի կանգնել
Ու քվեարկել, անկողմնակալ վճիռ հանել՝
Հիմնվելով սուրբ երդումից: Ես վերջացրի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Խորհուրդ կտամ ձեզ չանարգել
ձեր երկրի
Ահեղ հույզին՝ մեր մոլեգին այս կամանքին:

ԱՊՈԼԼՈՆ.— Իսկ իմ պատվերն է ձեզ՝ հարգել իմ և Զևսի
Գուշակությունը, փախեցեք դուք նրանից:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Քո փույթը չէ արյունալի գործին
խառնվել,
Էլ չես լինի դու անաղարտ իբրև գուշակ:
ԱՊՈԼԼՈՆ.— Ըստ քեզ՝ հա՞յրս էլ մեղանք գործեց,
երբ որ անսաց
Աղերսանքին Իքսիոնի, ով առաջին մարդասպանն էր:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Խոսի՛ր այդպես, իսկ ես,
թե դատը չշահեմ,
Ես կդառնամ այս երկրին պատուհասող:
ԱՊՈԼԼՈՆ.— Աստվածների մեջ վաղեմի և նորագույն
Անարգ ես դու, հաղթանակն իմը կլինի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Դու Փերեսի տանը արդեն
հարկադրեցիր
Մոյրաներին անմահություն տալ մի մարդու:
ԱՊՈԼԼՈՆ.— Չի արդար է բարեպաշտին նեցուկ լինել,
Մանավանդ երբ դրա կարիքը նա ունի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Գայթակղեցիր դու գինով
զառամյալ դից
Եվ հինավուրց օրենքները խորտակեցիր:
ԱՊՈԼԼՈՆ.— Կա՛ց, չես շահի դու այս դատը և քո թույնը
Դուրս կժայթքես, սակայն գիտցի՛ր. ոսոխիդ այն չի վնասի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Դու, պատանի՛, անարգում ես
պառավներին.
Բայց կսպասեմ մինչև դատի վերջաբանը,
Այնժամ կասեմ՝ կմոլեգնե՞մ, թե՞ ոչ ես այս քաղաքի մեջ:
ԱԹԵՆԱՍ.— Իմն է վերջին ձայնը, վեճը ես պիտի լուծեմ:
Նետում եմ իմ քվեն հօգուտ Օրեստեսի,
Զի մայր չէ ինձ ծնունդ տվել, և այսպես
Ամենայն ինչ մոտ է սրտիս, լոկ կնությունն է ինձ օտար:
Ամբողջ հոգով պատկանում եմ ես իմ հորը,
Ուստի բնավ չեմ կարեկցում այն կնոջը,
Որ սպանել է իր ամուսնուն՝ տան իշխողին:
Հաղթանակը Օրեստինն է, եթե անգամ
Բաշխվեն ձայները հավասար:
**(Նետում է քվեն):**
Թող հաշվարար

Դատավորների խմբում հանեն քվեները սափորներից:
ՈՐԵՍՏԵՍ.— Օ՜ Ապոլլոն, Փեբո՜ս, վերջն ի՞նչ կլինի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Օ՜ սև Գիշեր, մա՜յր, տեսնո՞ւմ ես
 այս ամենը:
ՈՐԵՍՏԵՍ.— Վախճանն է սպասում ինձ կամ լույսն արևի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Այստե՞ղ էլ կապրենք պատվով,
 թե՞ անարգված կթափառենք:
ԱՊՈԼԼՈՆ.— Միշտ հաշվեցեք քվեները, ո՛վ օտարներ,
Հաշվարկի մեջ թող չլինի խարդախություն:
Մեկ ձայն պակաս՝ և կլինի մեծ պատուհաս,
Մեկ քվե ավել՝ և կհառնի օջախը հին:
ԱԹԵՆԱՍ.— Այրը փրկվեց, թեպետ արյուն է նա թափել,
Քվեները իրար բաշխվել են հավասար:
ՈՐԵՍՏԵՍ.— Օ՜ Աթենաս, դու փրկեցիր օջախը իմ
Իմ հայրենի հողից զրկված տարագրյալին
Ետ դարձրիր: Հելլենները պիտի ասեն.
«Այս արգոսցի այրը վերստին տեր է դարձել
Իր հոր ինչքին, զի Պալլասն ու Ապոլլոնը,
Եվ երրորդ Փրկարարը ամենազոր
Մեծարեցին նահատակված նրա հորը,
Մերժեցին մոր իրավունքի պաշտպաններին»:
Իսկ ես հիմա երկրիդ և քո ժողովրդին
Հավերժական, անխախտ երդմամբ խոստանում եմ,
Հեռանալով իմ հոր տունը՝ ուխտում եմ ձեզ,
Որ արգոսյան հողում իշխող և ոչ մի այր
Չի շարժվելու թշնամական տեգով այստեղ:
Եթե մեկը իմ այս երդումը զանց առնի,
Գերեզմանիս միջից նրան ես կառաքեմ
Անտանելի արհավիրքներ, ու կարշավի
Նա անհաջող, չարագուշակ ուղիներով.
Փորձանքները կհարկադրեն նրան զղջալ:
Իսկ ով անշեղ պատվի քաղաքը Պալլասի
Իր դաշնակից զենքով նրան միշտ սատարի,
Նրա հանդեպ ես կլինեմ բարյացակամ:
Մնաս բարյավ դու և ազգը քո ոստանի,
Թշնամու դեմ թող նա կանգնի միշտ աննահանջ՝
Զենքով, ուժով ու հաղթական ճիգանքներով:
(Օրեստեսն ու Ապոլլոնը գնում են):

ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ.— Ավա՜ղ, ավա՜ղ, նոր աստվածներ,
հին օրենքը **Ստրոփե 1**
Դուք ոտնեցիք և խլեցիք իմ ձեռքերից մայրասպանին:
Ես՝ անպատիվ ու տարաբախտ, եղո՜ւկ, եղո՜ւկ,
Այս երկրի մեջ, ի պատասխան,
Պիտ թույն սփռեմ, թույնն իմ սրտի,
Ժանտ ցայտքերը կդարձնեմ հողը անպտուղ,
Եվ վարակից արգանդը՝ գոց,
Ծառն՝ անտերև, մերկ կմնա:
Ավա՜ղ, ավա՜ղ, արդարությո՜ւն, պիտ սերմանեմ
Այս եզերքի հողում ժանտախտ մարդակործան:
Ողբա՞լ: Ինչո՞վ դա ինձ կօգնի:
Ծանակվա՜ծ եմ,
Քաղաքացիք
Անտանելի վիշտ սիրտ կրեն:
Եղո՜ւկ ձեզ, ո՜վ ապերջանիկ,
Անարգ դստեր մութ Գիշերի:

ԱԹԵՆԱՍ.— Ինձ լսեցեք և մի՛ վայեք մեծաձայն,
Զի պարտություն դուք չեք կրել, այլ ինչպես
Չշահեց այս դատը ոչ ոք, անարգ չեք դուք:
Այստեղ Զևսի պայծառ վճիռը լսեցինք,
Եվ մեզ վկա եղավ ինքը՝ կանխասացը,
Որ մեղանքից Օրեստեսը մաքրվել է:
Մի՛ մոլեգնեք և մի՛ թափեք ձեր ժանտ ոխն այս
Երկրի վրա, մի՛ սերմանեք անպտղություն՝
Հեղեղելով ձեր գերբնական մահաբույրը,
Որ ողջ ցանքը կլափի բիրտ ժանիքներով:
Ես՝ լիովին իրավամբ, խոստում եմ ձեզ
Տալ ապաստան, մի ազնվայր իմ երկրում,
Ուր կնստեք սերձ գահերին, օջախի մոտ,
Եվ կպաշտվի ձեզ ժողովուրդն այս քաղաքի:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ.— Ավա՜ղ, ավա՜ղ, նոր աստվածներ,
հին օրենքը **Անտիստրոփե 1**
Դուք ոտնեցիք և խլեցիք իմ ձեռքերից մայրասպանին:
Ես՝ անպատիվ ու տարաբախտ, եղո՜ւկ, եղո՜ւկ,
Այս երկրի մեջ, ի պատասխան,

Այս թույնն սիրտս, թույնն իմ սրտի,
Քամու ցայտերը կղպարժանեն հողը անպտուղ,
Եվ վարակից արգանդը՝ ցոց,
Դառնա՝ անտերև, մերկ կմնա:
Ափսո՜ս, ավա՜ղ, արդարությո՜ւն, պիտի սերմանեմ
Այս եզերքի հողում ժանտաժախտ մարդակերծան:
Ողբա՞լ, ինչո՞վ դա ինձ կօգնի:
Ծանակվա՞ծ եմ,
Քաղաքացիք
Անտանելի վիշտ պիտ կրեն:
Եղո՜վ ձեզ, ո՞վ ապերջանիկ,
Անարգ դստեր մութ Գիշերի:

ԱԹԵՆԱՍ.— Անարգված չեք, մարդկանց հանդեպ ձեր
ցասման մեջ
Ձա՛ավ եղեք, հողը մի՛ պղծեք, դիցուհինե՛ր:
Ենթարկվում եմ ես Զևսին, և... ասե՞լ արդյոք.
Աստվածներից հայտնի է լոկ ի՛նձ բանալին
Այն սրահի, ուր փակի տակ շանթն է նրա:
Բայց հարկ չկա ձեզ սպառնալու, անսացե՛ք ինձ
Եվ մի՛ տխրեք իմ երկրում ձեր հանդուգն,
Արմավիրքներ զուծող լեզվի պտուղները,
Թող հանդարտվի ձեր դառն ոխը և ալիքը:
Դուք կլինեք ինձ դրացի գերապատիվ,
Եռունդներից, պսակներից առաջ մարդիկ
Ձեզ կձոնեն միշտ Ճոխ բերքն այս լայն հողի,
Ու դուք հավետ այդն խրատս կդրվատեք:

ԽՈՒՄԲ.— Ա՜խ, այս վիշտը սիրտ կրեմ, Ստրոփե 2
Եմ զառամ, պիտ երկրի տակ իջնեմ հիմա՝
Անպատվությամբ վարկաբեկված:
Համակ փառվում եմ զայրույթից, արտմությունից,
Եղո՜վ, եղո՜վ ինձ, օ՜ Երկիր.
Այս ի՞նչ ցավ է
Իմ ողջ մարմինը համակել:
Լսի՛ր դու ինձ, մա՛յր իմ Գիշեր,
Աստվածները իմ վաղեմի պատիվն այժմ
Խորտակեցին
Անպարտելի խարդախությամբ:

ԱԹԵՆԱՍ.— Ես ներում եմ ցասումդ, զի տարիքով ես:
Քո հասակի հաշվին ինձնից գիտուն ես դու,
Բայց ինձ էլ է Զևսը տվել խոհեմություն.
Հեռանալով օտար հողեր՝ իմ երկիրը
Դու կցանկաս, գուշակում եմ այդ բանը քեզ:
Ժամանակի հոսանքի հետ իմ քաղաքը
Նոր փառքերի պիտի հասնի, և քո գահը
Էրեքթևսի օջախի մոտ կպանծացնեն
Արանց, կանանց թափորները. Նման պատիվ
Այլերկրացի մարդկանց մեջ չես գտնի երբեք:
Ուրեմն՝ մի՛ սերմանիր սատ, իմ եզերքում
Արյունալի պատանդատումներ, մի՛ բռնկիր
Մոլեգնությամբ պատանյաց սիրտն առանց գինու:
Մի՛ տոգորիր հոգիներն իմ քաղաքացվոց՝
Աքաղաղի հանդգնությամբ, երկպառակիչ կագ մի՛ նյութիր.
Թող չցվեն միմյանց հանդեպ անզգամությամբ:
Իսկ պատերազմ օտարուսս միշտ էլ կգտնեն
Նրանք, ովքեր համակված են փառքի տենչով:
Չեմ ուզում ես աքլորամարտ օջախիս մեջ:
Այսպիսին է քեզ ուղղված իմ առաջարկը.
Գործել բարիք, առնել բարիք և բարեխառն
Ապրել երկրում աստվածներին հույժ սիրելի:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Ա՜խ, այս փիշտը պիտի կրեմ,

**Անտիստրոփե 2**

Ես՝ զառամս, պիտո երկրի տակ իջնեմ հիմա՝
Անպատվությամբ վարկաբեկված:
Հևալ փռվում եմ զայրույթից, դառնությունից,
Եղո՜վ, եղո՜վ ինձ, օ՜ Երկիր.
Այս ի՞նչ ցավ է
Իմ ողջ մարմինը համակել:
Ակա՜նջ դիր ինձ, մա՛յր իմ Գիշեր,
Աստվածները իմ վաղեմի պատիվն այժմ
Խորտակեցին
Անպարտելի խարդախությամբ:

ԱԹԵՆԱՍ.— Բարի խորհուրդ քեզ տալուց ես չեմ ձանձրանա.
Դու չես ասի, թե դիցուհին երիտասարդ
Եվ ժողովուրդն իր քաղաքի քեզ՝ զառամիդ

Անհյուրընկալ իրենց հողից անպատվությամբ արտաքսեցին:
Ոչ, եթե դու հարգում ես ուժը Պիթոյի
Եվ անուշիկ ու մեղմացնող խոսքը լեզվիս,
Այստեղ մնա, իսկ եթե չես ուզում մնալ,
Դու անիրավ մի՛ սպառնա իմ այս ոստանին
Քո ցասումով, քո մոլուցքով ու կործանմամբ,
Չի իրավունք են այժմ տալիս քեզ այս երկրում
Արդարաբար իշխել՝ հավերժ մեծարանքով:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Ո՛վ տիրուհի Աթենաս,
ինձ որտե՞ղ կտաս դու օթևան:
ԱԹԵՆԱՍ.— Անդ, ուր չկա բնավ չարիք. համաձայնի՛ր:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Թե հոժարեմ, ինչո՞վ արդյոք
ինձ կպատվեն:
ԱԹԵՆԱՍ.— Ոչ մի օջախ կամքիդ դեմ չի բարգավաճի:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Դո՞ւ կընձայես ինձ այդպիսի
հզորություն:
ԱԹԵՆԱՍ.— Կերջանկացնեմ նրանց, ովքեր քեզ կհարգեն:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Եվ տալի՞ս ես ինձ երաշխիք
հավերժական:
ԱԹԵՆԱՍ.— Չեմ խոստանա այն, ինչը չեմ կատարելու:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Սփոփեցիր ինձ, բարկությունս
հանդարտվում է:
ԱԹԵՆԱՍ.— Եթե մնաս, ձեռք կբերես բարեկամներ:
ԵՐԳՉԱԽՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ.— Արդ, ի՞նչ ես ինձ հրամայում
ցանկալ երկրին:
ԱԹԵՆԱՍ.— Հաղթանակ, որ տխրությամբ չի խեղաթյուրվի:
Թող ծովերի ջրերից ու ցամաքներից,
Թող երկնքից, արևի վառ լույսով ցողված,
Քամիների սյուքն այս երկիրը հովհարի:
Թող խաշները առատ լինեն, հողը՝ բերքի,
Թող անխափան հավերժ ծաղկի քաղաքը իմ,
Եվ պտղաբեր լինի միշտ սերմը մարդկային,
Թող ամբարիշտ մարդկանց պտուղը տակ կորչի,
Քանզի, իբրև մի այգեպան, սիրում եմ ես,
Երբ անկործան ազնիվ բույսերն են ջոկ անում:
Սա է քո հոգսն, իսկ ասպարեզը ռազմական,
Ճակատամարտերը պանծալի իմ փույթն են սոսկ,

Ես պիտի հոգամ, որ այս տանը ամենահաղթ
Միշտ մեծարեն մահկանացու բոլոր մարդիկ:

ԿՈՄՄՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Ընդունում եմ դրացությունը Պալլասի, **Ստրոֆե 1**
Չեմ անպատվի քաղաքը այս,
Որ սիրում են Արեսը, Զևսն ամենակալ:
Նեցուկն է այն աստվածների,
Բագինների պաշտպանն է այն և սուրբ զարդը հելլենացվոց:
Գուշակում եմ բարի գալիք,
Աղոթում եմ ես լավակամ,
Որ արևի լուսե շողը հողից ծնի
Առատաբուխ, երջանկաբեր
Բյուր բարիքներ կենսապարգև:
ԱԹԵՆԱՍ.— Բարեմտորեն այս գործն արեցի
Ոստանիս համար. զորեղ, անողորմ
Դիցուհիներին սատ բնակեցրի,
Քանզի նրանց է վիճակված վարել
Ողջ մարդկայինը:
Ով անչար աչքով նրանց չնայեն,
Նա չի իմանա՝ որտեղից իրեն
Աղետը զարկեց, նախնյաց մեղանքը
Կտանի նրան դեպի հատուցում:
Հոխորտա՛մ էիր. կկործանվես լո՛ւռ,
Նրանց մոլուցքը քեզ հող կդարձնի:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Ծառակործան ժանտ խորշակ, մի՛
փչիր այստեղ, **Անտիստրոֆե 1**
Մի՛ եղծանիր պարգևը իմ,
Մի՛ խորշակիր աչքերը թարմ ընձյուղների,
Քո տարածքի ներսո՛ւմ դու կաց:
Բույսեր լափող անագորույն ախտն այստեղ թող չմերձենա:
Թող խաշները բարգավաճեն,
Հղիանան զույգ գառներով,
Եվ այս երկրի բազմահարուստ ընդերքը թող
Հատուցանի շնորհը դից՝
Ծավալելով բյուր ընծաներ:

ԱԹԵՆԱՍ.— Լսո՞ւմ եք դուք,
Ո՜վ քաղաքի պահապաններ,
Ինչ են նրանք ձեզ ցանկանում: Մեծ են, հզոր
Էրինիաները անմահների կամարի մեջ
Եվ աշխարհում ստորերկրյա, մարդկանց հանդեպ
Ակնհայտ է նրանց ուժը ու բացարձակ:
Ոմանց աչքերը կուրանում են միշտ լալուց,
Ոմանց՝ նրանք շնորհում են ցնծուն երգեր:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Թող աղետներ չկործանեն Ստրոփէ 2
Մարդկանց մահը անժամանակ,
Եվ կույսերին գեղեցկատես
Տաքեցե՛ք ամուսիններ,
Դո՛ւք, զորավոր
Աստվածներ, ո՜վ Մոյրաներ,
Ո՜վ զավակներ ինձ ծնած մոր.
Ամենայն ինչ բաշխում եք դուք արդարաբար,
Իշխում բոլոր օջախներում
Հար սպառնալով ահեղորեն
Արդարացի ձեր պատիժով:
Ահա մեջ դուք եք բոլորից շատ մեծապատիվ:
ԱԹԵՆԱՍ.— Հիացնում է ինձ իմ երկրի համար
Այս բարեհաճ դից գործած բարիքը:
Պեյթոյի աչքերն ինձ սիրելի են,
Քանզի հսկեցին լեզուս, բերանս,
Եվ անողոքների ժանտ էակներին հաշտեցրել, մեղմել,
Հաղթանակ տարավ Զևս-Ճարտասանը:
Հավերժ մեր միջև
Թող լինի մրցույթ բարեգործության:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Աղոթք եմ ես անում նաև, Անտիստրոփէ 2
Որ երբեք այս ոստանում
Խռովություն չորոտա,
Թող չխմի հողն սև արյուն
Քաղաքացու,
Եվ վրեժի ցասումն այնժամ
Չտա մահվան դժեմ պահանջի մահ
Ու քաղաքում ծնունդ տա նոր մեղսանքների:
Թող փոխադարձ սիրով այստեղ

Հրճվե՛ք բոլո՛րդ միասին

Եվ թող ատեն միշտ մեկ սրտով.
Միաձնությունն ուժեղ դեղ է մարդկանց համար:

ԱԹԵՆԱՍ.— Դեպ բարի խոսքը նա գտավ ուղի,
Չի խմատում է:
Ու թվալեր ահարկու տեսիլքի է նա,
Բայց իմ ուտաճին բերեց մեծ բարիք:
(Քաղաքացիներին)
Բարեկամներին բարեկամաբար
Հար մեծարեցե՛ք, և այս ոստանը
Դուք հռչակեցե՛ք
Ձեր շիտակությամբ կատարելական:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Հրճվի՛ր, հրճվի՛ր հարստությամբ
քո ցնծալից, Ստրոփե 8
Հրճվի՛ր, ո՛վ ազգ այս քաղաքի:
Ձևի գահին է քեզ զորավիգ,
Սիրելին ես իր սիրելի կույս աղջկա,
Իմաստնացի՛ր դու օրեցօր:
Միշտ պատվում է Հայրը նրանց,
Ում Պալլասն է հովանավոր:

ԱԹԵՆԱՍ.— Հրճվեցե՛ք և դո՛ւք, ինձ՝ հարկ է այժմ
Ցույց տալ ձեզ ուղին դեպ ձեր օթևան՝
Ուղեկցորդների վառ ջահերի տակ:
Եկե՛ք, սրբազան ողջակեզներով
Թող երկրի ներքո աղետը կանխվի,
Մնա ընդերքում, և թող Բարիքը
Իմ ոստանը դեպ հաղթանակ տանի:
Ո՛վ Կրանաոսի քաղաքաբնակ
Զարմեր, հյուրերին առաջնորդեցե՛ք:
Թող բարի միտքը
Դեպ բարին մղի իմ քաղաքացվոց:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.— Հրճվի՛ր, հրճվի՛ր, դարձյալ խոսքս
կրկնում եմ: Անտիստրոփե 3
Դո՛ւք, բոլո՛րդ այս քաղաքում,
Մարդի՛կ և դի՛ք, որ Պալլասի
Այս ոստանի բնակիչներն եք մշտական.
Ով ինձ՝ հյուրիս ապաեք պատվի,

...ի տեսնես երբեք պատճառ
...ր վիճակը պարտավքելու:

...ՍԱ

...ՆԱ.— Հաճո են ինձ այդ խոսքերդ և ուխտը քո:
Արդ, կողեկցեմ քեզ լռատարոդ շամի ցոլքով
...ս ընկերքդ, ապարանքդ քո տաղերկրպս:
...ան մեզ հետ կուռքս հսկող քրմուհիներ
Եվ Թեբեսի համայն երկրի զարդն՝ ազգը իմ,
...ի փառաշուք թափոր՝ կանանց, մանուկների:
Ավարտերի ամբոխը մեզ կհիանա,
Ու ամենքը՝ ծիրանագույն հանդերձներով:
(Ամբոխին)
...ի՛վ արեք, ջահերի հուրը թող վառվի՛,
Եվ ապուհետ՝ մեր հող մնած քարի խումբը
...ող հոչակի՛ իմ ուխտանը երջանկությամբ:

...ի ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ.— Արդ, Գիշերի մեծ ու չարգո զառամ դատեր,

Ստրոֆե 1

Ձեր օրևան դուք գնացեք
Մեր այս գլխարք թափորի հետ:
Ամեն մեկը դրվխառմանքի և՛րգ թող հնչի:

Անտիստրոֆե 1

Այս երկրի վաղնջական ընդերքներին
Մենք ընծաներ, բազմամեծար
Ողջակեզներ պիտի ձոնենք:
Ամեն մեկը դրվխառմանքի և՛րգ թող հնչի:

Ստրոֆե 2

Ծո՛ւր, դղորմած ու բարեմիտ
Դիցուհիներ մեր սուրբ հողի, եկե՛ք մեզ հետ,
Այս ճանապարհն անցեք բերկրո՛ւմ, այդ բոցակեզ
ներոններո՛վ,
Մեր երգի հետ դուք ընծացե՛ք ուրախածայն:

Անտիստրոֆե 2

Թող Դաշի՛ձքը այդ հետևի
Մեր ջահերին, զի Պալլասի քաղաքացվոց
Այդ վիճակն են բաժին հանել ամենատես Զևսն ու Մոյրան.
Մեր երգի հետ դուք ընծացե՛ք ուրախաձայն:
(Բոլորը գնում են):